ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

« » 2020 թ. N

Ձեր՝ 01.10.2020
N 01/01/1805-20 գրության

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԶԱՔՅԱՆ 7-2
info@advocates.am

ՄՈՒՏՔ № 2142-20
08 10 2020 թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հարգելի՛ պարոն Զոհրաբյան,

Ձեր գրությամբ բարձրացված հարցերի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 175-րդ հոդվածով սահմանված են միայն որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս աշխատողի աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելու և այդ ժամանակահատվածում աշխատողի վարձատրության վերաբերյալ կարգավորումները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մշակվել է Օրենսգրքում համապատասխան փոփոխությունների նախագիծ, որով նախատեսվում է կարգավորում տալ նաև Ձեր գրությամբ բարձրացված հարցին:

Մինչ այդ, կարծում ենք, որ Ձեր գրությամբ ներկայացված անալոգիան կիրառելի է:

Ինչ վերաբերում է զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վարձատրությանը, ապա տեղեկացնում ենք, որ այն կարգավորվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **/Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

10/8/2020

X

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ԲԱԼՅԱՆ

Signed by: TER-BALYAN VAHRAM 2003680118

Կատարող՝ աշխատանքի և զբաղվածության
վարչություն, 010 565 354